Արձանագրություն N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-06-9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«11» նոյեմբերի 2016թ. Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արման Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

1.1 «Միկրորինգ» ՍՊԸ-ի, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի, «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի, Ա/Ձ Անահիտ Կարապետյանի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի, « Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2 «Միկրորինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում>>-ում (Հավելված 1) շարադրանքը թերի է, այն է՝ 7.5 կետի 2-րդ ենթակետի փոխարեն գրված է 1-ին եթակետ:

2.3 «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

<<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում>>-ում (Հավելված 1) շարադրանքը թերի է՝ 1-ին կետի 1-ին ենթակետը լրացված չէ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. ԱՁ Անահիտ Կարապետյանի հայտով ներկայացրած <<Ընթացակարգին մասնակցելու դիմում>>-ում (Հավելված 1) հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ, ուստի պետք է փաստաթղթերը հաստատված լինեին էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետով և 45-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց մերժել ԱՁ Անահիտ Կարապետյանի հայտը՝ 4-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. **Մասնակիցների առաջարկած գները՝**

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գումար
1	«Միկրորինգ» ՍՊԸ	1 261 617	173 800	1 435 417	287 083	1 722 500
2	«Կոմպմարկետ» ՍՊԸ	697 000	68 000	765 000	153 000	918 000
3	«Պատրոն ՌՄ» ՍՊԸ	1 195 870	132 880	1 328 750	265 750	1 594 500
4	«Կոմպասս» ՍՊԸ	605 000	82 500	687 500	137 500	825 000
5	«Նորմա-պլյուս» ՍՊԸ	1 247 619	62 381	1 310 000	262 000	1 572 000
6	«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ	762 837	66 330	829 167	165 833	995 000
7	Ա/Ձ Անահիտ Կարապետյան	998 000	112 000	1 110 000	-	1 110 000

Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. նոյեմբերի 15-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Կարեն Մելքոնյան

Անդամներ՝ Կարեն Համբարձումյան

Խորեն Պետրոսյան

Արման Հարությունյան

Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ Դավիթ Թովմասյան

Արձանագրություն N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-06-9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«15» նոյեմբերի 2016թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արման Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արթուր Թամրազյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.

«Միկրորինգ» ՍՊԸ-ն, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները: Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

<u>1-ին</u> չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կոմպասս» ՍՊԸ-ին:

<u>1-ին</u> չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016թ. նոյեմբերի 21-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016թ. նոյեմբերի 23-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Կարեն Մելքոնյան

Անդամներ՝ Կարեն Համբարձումյան

Խորեն Պետրոսյան

Արման Հարությունյան

Քարտուղար՝ Արթուր Թամրազյան

Դավիթ Թովմասյան